ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2025 թվականի N 375-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 5-րդ հոդվածի 5-րդ ու 6-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես Հայաստանի Հանրապետության սեփականություն ընդունել Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից նվիրվող՝ «Համազգեստով քաղաքացի» բջջային-հեռախոսային հավելվածը և դրա կառավարման հարթակը (այսուհետ նաև՝ բջջային հավելված կամ գույք), և այն ամրացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) մինչև 2025 թվականի ապրիլի 15-ն ապահովել Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի հետ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրատվության պայմանագրի կնքման և հանձնման-ընդունման գործընթացը.

2) ապահովել ըստ նպատակային նշանակության բջջային հավելվածի օգտագործումը և սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ուժերով ու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ